ՈՐՔԱՆՈ՞Վ Է ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՑՈՐԵՆԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆ

DOI: 10.52174/2579-2989_2023.3-98

Էլի ցորենն է աշխարհի հիմքը,
Փառք տանք ցորենին և օրհնաբանենք:
Ցորենի մահով մահը խափանենք,
Էլի ցորենն է աշխարհի հիմքը:
Մայրը՝ հողն է սուրբ, հայրը՝ երկինքը,
Հող դարձնենք քարը և ցորեն ցանենք:
Էլի ցորենն է աշխարհի հիմքը,
Փառք տանք ցորենին և օրհնաբանենք:

Համո ՍԱՀՅԱՆ

Հիմնաբառեր. *պարեն, ցորեն, ինքնաբավություն, արտադրություն, սպառում, առևտուր, միտումներ*

Հայաստանի պարենային անվտանգության գլխավոր խնդիրը բնակչությանը հաց ու հացամթերքով ապահովումն է՝ բավարար քանակությամբ և որակով: Այս խնդիրը հրատապ է եղել մշտապես, քանի որ տարբեր պատճառներով Հայաստանը հացահատիկի բարձր ինքնաբավություն չի ունեցել:

Ներկայում ՌԴ-ն հացահատիկի միակ արտահանողն է դեպի Հայաստան: Իհարկե, այս մենաշնորհային վիճակն ունի ռիսկեր, սակայն Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը և միջպետական տնտեսական ու քաղաքական կապերի զարգացման միտումները ցույց են տալիս, որ այսօր և մոտ ապագայում ցորենի պահանջարկի պակասի լրացման հիմնական աղբյուրը ՌԴ-ից ներմուծումն է: Հետևաբար՝ անհրաժեշտ է հարգալից ու խելամիտ կերպով վերաբերվել ՌԴ-ի և ԵԱՏՄ-ի հետ առևտրատնտեսական կապերին ու չմոռանալ անցյալի դասերը:

Հոդվածում լուսաբանվում է ՌԴ-ում ցորենի արտադրության և արտահանման վիճակը, ինչպես նաև Հայաստանի հետ առևտրային կապերի զարգացման միտումները:

Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1978 թ. գերազանցությամբ ավարտել է ՀԳԻ տնտեսագիտական ֆակուլտետը, աշխատել արտադրությունում և սովորել ասպիրանտուրայում: 1990 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2003 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2007 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999 թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր: 2002-2011 թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ: 2013 թ.-ից աշխատում է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում, նախ՝ զբաղեցնելով տնօրենի և սոցիալ-տնտեսական ծրագրերի համակարգողի, ապա 2016 թ.-ից՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագրի տնօրենի պաշտոնները: Ներկայում նույն կենտրոնի ավագ փորձագետ է:

Հեղինակ է շուրջ 170 գիտական հոդվածների, 21 մենագրությունների և ուսումնական ձեռնարկների:

https://orcid.org/0000-0002-3019-4075

Խորհրդային տարիներին տնտեսության վարչահրամայական կառավարման պայմաններում, երբ, ըստ միութենական հանրապետությունների, սահմանված էր աշխատանքի բաժանում, և գործում էր կենտրոնացված մատակարարումների համակարգը, Հայաստանի գյուղատնտեսությունը մասնագիտացած էր պտղաբանջարաբուծության և կաթնամսային անասնապահության ուղղությամբ: Հացահատիկի պահանջարկի պակասը երաշխավորված ձևով լրացվում էր միութենական ֆոնդից: Հետխորհրդային առաջին տարի-

ներին, երբ խաթարվել էին բոլոր ավանդական տնտեսական կապերը, երկիրը տրանսպորտային շրջափակման և տնտեսական անկայունության վիճակում էր, հացի խնդիրը մեծ դժվարություններով լուծվում էր ԱՄՆ-ի և ԵՄ երկրների մարդասիրական օգնությունների ու ապրանքային վարկերի միջոցով: Ամենածանր իրավիճակում, երբ հացի պաշարը գրեթե սպառված էր, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հարկադրված դիմեց Թուրքիայի ղեկավարությանը՝ Կարս – Գյումրի երկաթգծով ցորեն ստանալու խնդրանքով: «1992 թ. հոկտեմբերի 10-ին Անկարայում պայմանագիր է ստորագրվում Հայաստանի պարենի և Թուրքիայի առևտրի նախարարությունների միջև. Թուրքիան փոխարինաբար Հայաստանին տրամադրում է 100 հազար տոննա հացահատիկ»[1]: Այո՛, այդ դժվարին ժամանակաշրջանում Հայաստանի բնակչությունը տառացիորեն «անիվների վրայից» էր հաց ստանում: Հետագայում Ռուսաստանից հացահատիկի տեղափոխման լոգիստիկական համակարգն աստիճանաբար կարգավորվեց, և այսօր Ռուսաստանը դեպի Հայաստան հացահատիկի միակ արտահանողն է:

Ի դեպ, ըստ Հացահատիկի միջազգային խորհրդի (IGC) հուլիսյան զեկույցի, կանխատեսվում է, որ ցորենի համաշխարհային արտադրությունը 2022-2023 թվականներին կհասնի 770 միլիոն տոննայի՝ 2021-2022 թվականների 781 միլիոն տոննայի փոխարեն, իսկ առևտրի համար հասանելի կլինի 195 միլիոն տոննան[2]:

Ռուսաստանը 2022 թվականին հացահատիկի համախառն բերքի ռեկորդ է սահմանել: Երկրում հավաքվել է 157,676 մլն տոննա հացահատիկ, ինչը 29,9%-ով ավելի է, քան 2021 թվականին, այդ թվում՝ 104,237 մլն տոննա ցորեն (+ 37%): ՌԴ գյուղատնտեսության նախարարության կանխատեսումներով՝ 2023 թվականին հացահատիկի բերքը կկազմի 123 միլիոն տոննա, այդ թվում՝ 78 միլիոն տոննա ցորեն[3]:

Ելնելով վերոնշյալից՝ կարող ենք նկատել, որ եթե Հայաստանի՝ որպես ԵԱՏՄ անդամ երկրի ցորենի ներմուծման առավելագույն քանակությունը չգերազանցի 500 հազ. տոննան, ապա արտահանողի մատակարարումը երաշխավորված է:

Հայաստանում պարենային ինքնաբավության միջին մակարդակը հասնում է մոտ 60%-ի: Ըստ 2019-2021 թթ. տվյալների՝ հանրապետության պահանջարկը կարտոֆիլի, բանջարեղենի, բոստանային արտադրանքի, մրգի և հատապտուղների, ձվի, կաթի, ոչխարի և այծի մսի, ինչպես նաև ձկան գծով ամբողջովին ապահովվում է: Որոշ ապրանքատեսակների (շաքար, կաթ, տավարի և խոզի միս) սպառման պահանջարկի մի մասը լրացվում է ներկրումով, իսկ ցորենի, բուսական յուղի, թռչնի և խոզի մսի գերակշիռ մասը ներկրվում է (աղյուսակ 1): Այսպիսի իրավիճակում ՀՀ պարենային անվտանգության քաղաքականությունը պետք է ուղղորդել մի կողմից համեմատական առավելությունների սկզբունքի պահպանմամբ՝ ներմուծումը սեփական արտադրությամբ փոխարինելու և մյուս կողմից՝ լոգիստիկ շղթայի կառուցակարգերի ու ենթակառուցվածքների կատարելագործման ուղիով: Մեզանում դեռևս շրջանառվում է այն կարծիքը, որ Հայաստանը պետք է ապահովի բոլոր պարենային ապրանքների և, հատկապես, հացահատիկի լիարժեք ինքնաբավություն: Օրինակ՝ Թ. Մանասերյանի կարծիքով. «….հացահատիկի գծով մշտապես ներկայացվել է, որ Հայաստանը կարող է ունենալ առավելագույնը 70% ինքնաբավություն, իսկ մնացած 30%-ը կներկրի դրսից: Հետազոտելով ողջ Հայաստանն ու Արցախը միասին՝ արդյունքում տեսնում ենք, որ լինի երաշտ կամ բերքատու տարի, ամենամիջին ցուցանիշներով առնվազն 120% ինքնաբավություն ունենք: Այսինքն՝ խոսքը վերաբերում է ոչ թե, որ այդ ավելցուկը վաճառենք դրսում, այլ պետական ռեզերվները համալրենք, ինչի կարիքն այսօր կա, և Հայաստանի Հանրապետությունը, ցա-

[1] Թաթուլ Հակոբյան, Դեմիրելը և Հայաստանը, https://www.civilnet.am/news/159869/%D5%A4%D5%A5%D5%B4%D5%AB%-D6%80%D5%A5%D5%AC%D5%A8-%D6%87-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A8/

[2] Топ-10 ведущих стран-производителей пшеницы в 21 веке, https://agbz.ru/news/top-10-vedushchikh-stran-proizvoditeley-pshenitsy-v-21-veke/

[3] Россия стала крупнейшим в мире экспортером пшеницы, https://www.vesti.ru/finance/article/3385343

վոք, դրան քիչ է ուշադրություն դարձնում»[4]: Նշենք, որ հարգելի տնտեսագետն այս խոսքն ասում է 2021 թվականին, երբ 44-օրյա պատերազմի հետևանքով Արցախը կորցրել էր գյուղատնտեսական նշանակության հողերի 82%-ը, այսինքն՝ 580 000 հեկտարից մնացել էր մոտ 105 000 հա, որից հակառակորդի դիտարկման տակ էր գտնվում մշակության համար վտանգավոր մոտ 3600 հա տարածք[5]: Ուրեմն, այդ ինչ ռեսուրսով պետք է ՀՀ-ի հետ միասին ապահովեին 120% ինքնաբավություն: Հիմնականում ինքնաբավ լինելը վատ ցանկություն չէ, բայց դրա իրականացման ճանապարհին չպետք է անտեսել տնտեսական նպատակահարմարությունը և, առավել ևս, չպետք է խախտել տնտեսավարողների ազատությունը:

Որոշ գիտնականներ լիարժեք ինքնաբավության հիմնախնդիրն առաջարկում են լուծել միայն չօգտագործվող հողերը ցանքի տակ դնելով: Օրինակ՝ ԳԱԱ «Էկո կենտրոնի» սննդի ռիսկերի գնահատման կենտրոնի ղեկավար Դավիթ Պիպոյանի կարծիքով. «Հայաստանը դասվում է այն երկրների շարքին, որ անգամ հացահատիկի առումով ունի շատ ցածր պարենային ապահովություն: Դա նշանակում է, որ մենք պետք է ունենանք մեկ ագրարային քաղաքականություն, որի մեջ պետք է անկյունաքարային լինի գյուղատնտեսական էքսպանսիան, այսինքն՝ գյուղատնտեսության ընդլայնումը: Մենք շատ ավելի շատ քանակությամբ սնունդ պետք է արտադրենք և չունենանք այդքան չօգտագործվող հողեր»[6]:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Հիմնական պարենային ապրանքների արտադրությունը, ներմուծումը և սննդի սպառումը 2019-2021 թթ., հազ. տ*

Պարեն	2019 թ.			2020 թ.			2021 թ.		
	Արտադրում	Ներմուծում	Սննդի սպառում	Արտադրում	Ներմուծում	Սննդի սպառում	Արտադրում	Ներմուծում	Սննդի սպառում
Ցորեն	112,6	325,6	392,3	132,0	426,9	385,6	97,2	330,4	362,5
Կարտոֆիլ	404,1	12,5	190,0	437,2	10,6	179,6	364,6	15,3	184,2
Բանջար և բոստան	749,5	48,9	524,1	819,4	54,6	541,9	751,4	62,5	527,4
Միրգ և հատապտուղ	290,6	90,6	269,7	274,3	103,7	261,8	323,0	105,5	258,1
Բուսական յուղ	0,4	28,7	28,4	0,3	31,4	30,8	0,2	27,7	28,6
Շաքար	60,0	25,2	76,4	28,8	50,7	75,0	23,3	53,1	68,3
Ձու	39,6	0,0	37,6	41,5	0,1	39,1	39,1	0,5	37,4
Կաթ	667,9	146,1	711,5	654,3	171,1	715,1	670,7	125,7	691,4
Տավարի միս	68,1	7,6	74,2	68,6	10,7	77,4	69,4	6,5	74,8
Խոզի միս	16,1	13,3	28,8	15,7	19,5	34,3	15,8	14,3	29,5
Ոչխարի և այծի միս	10,7	0,0	9,2	10,8	0,0	10,6	10,8	0,0	10,7
Թռչնի միս	12,4	44,9	54,5	12,6	40,3	52,5	14,6	40,4	54,5
Ձուկ	18,3	3,7	14,7	19,1	4,8	12,2	19,7	5,4	12,8
Խաղող	217,5	8,2	11,5	283,1	4,4	12,5	237,1	3,3	12,1

* *Աղբյուրը. կազմել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ «Պարենային ապահովություն և աղքատություն», 2023 թ. հունվար-մարտ հրապարակման փվյալներով:*

4 Պարենային ճգնաժամն ինչ ազդեցություն կթողնի Հայաստանի վրա. պարզաբանում է տնտեսագետը, https://eco.am/%D5%BA%D5%A1%D6%80%D5%A5%D5%B6%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%B3%D5%A3%D5%B6%D5%A1%D5%AA%D5%A1%D5%B4%D5%B6-%D5%AB%D5%B6%D5%B9-%D5%A1%D5%A6%D5%A4%D5%A5%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/

5 Տես Ս. Ավետիսյան, Մ. Խաչատրյան, Պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետության ագրոպարենային համակարգի կորուստները և պետական աջակցության ծրագրերը, https://dspace.asue.am/items/628e4eeb-aff6-457f-853d-339af0f7b756/full և Аветисян С., Послевоенные проблемы развития аграрного сектора Республики Арцах, «Амберд» бюллетень, N 5, 2021, էջ 18-23:

6 Պարենային անվտանգություն. որքանով է Հայաստանն ինքնաբավ ձեթի, շաքարի ու մսի գծով, https://mediafactory.am/our-products/food-security

Իհարկե, Հայաստանի նման սակավահող պետության համար ուղղակի անտնտեսվարություն է, որ վարելահողերի կեսից ավելին ցանքի տակ չի դրվում: Դրա հետ մեկտեղ, այն պնդումները, որ այդ հողերի օգտագործմամբ կարող ենք հաղթահարել պարենի ինքնաբավությունը, զուտ միակողմանի դատողություն է, որը հաշվի չի առնում հողօգտագործողի բիզնես շահերը: Ուստի հարկադրված ենք վերստին վերադառնալ այն խնդրին, որ գյուղատնտեսությունը բիզնես է, և եթե տվյալ հողակտորը գոնե նվազագույն շահույթ չի ապահովում, ապա գյուղատնտեսը դա չի օգտագործում: Բայց այստեղ որոշ մասնագետներ համակվում են այն մտայնությամբ, որ գյուղատնտեսությունը բիզնես չէ:

Հիշեցնենք, որ դեռևս անցյալ դարի սկզբներին ԱՄՆ-ում և այլ երկրներում քննարկման առարկա էր դարձել «գյուղատնտեսությունը բիզնե՞ս է, թե՞ կենսաձև» հարցադրումը: Մոտեցումները տարբեր էին, բայց նպատակը մեկն էր՝ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների համար ապահովել տնտեսավարման առավել նպաստավոր պայմաններ: Ի վերջո, կարծես թե, այդպես էլ եղավ, քանի որ գյուղատնտեսական գործունեություն իրականացնողներն օգտվեցին ոչ միայն փոքր և միջին բիզնեսի պետական աջակցության ծրագրերից, այլև ստացան լրացուցիչ արտոնություններ:

Ներկայում նման հարցադրում է հնչում նաև Հայաստանի գիտական և գործարար շրջանակներում: Ի դեպ, ինչպես մեր իրականության մեջ հաճախ է պատահում, պատասխանը ծայրահեղորեն աներկբա է: Հատկապես բանկային համակարգի ներկայացուցիչների համար գյուղատնտեսությունը բիզնես է և վերջ: Հակառակ կարծիքի են քաղաքացիական հասարակության, գիտական և արտադրական ոլորտների շահագրգիռ ներկայացուցիչները: Վերջիններս պնդում են, որ իր առանձնահատկությունների պատճառով գյուղատնտեսությունն ունի պետական խնամակալության կարիք, դասական առումով՝ բիզնես չէ և վերջ: Իհարկե, այս մոտեցումների դրդապատճառները միանգամայն հասկանալի են, բայց, ինչպես ասում են, ճշմարտությունը մեկն է:

Մինչև 20-րդ դարի 20-ական թվականները, ավելի ստույգ՝ 1926 թ.-ի տվյալներով՝ գյուղական բնակչությունը Հայաստանի բնակչության մոտ 81%-ն էր (իսկ մնացած 19%-ին պայմանականորեն կարելի էր համարել քաղաքային), քանի որ վարում էր օժանդակ տնտեսություն՝ ընտանի կենդանիներ էր պահում և զբաղվում հողագործությամբ[7]: Հետևաբար՝ գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակը շատ ցածր էր, և գյուղացիները վարում էին փակ բնաիրային տնտեսություն, որի պայմաններում կապը շուկայի և ծառայություններ մատուցող կառույցների հետ գրեթե աննշան էր: Հասկանալի է, որ այսպիսի տնտեսավարումը հեռու էր դասական ձեռնարկատիրությունից և չէր կարող կոչվել բիզնես:

Հայաստանում անկախության հռչակումից հետո, հատկապես՝ 1991-1994 թվականներին, երբ ագրարային վերափոխումների շրջանակում կատարվեց հողի, անասնագլխաքանակի և գյուղատնտեսական տեխնիկայի զանգվածային սեփականաշնորհում, կարծես թե, անհրաժեշտ նախապայմաններ ստեղծվեցին գյուղատնտեսության ոլորտում ձեռնարկատիրական գործունեության զարգացման համար: Գյուղացիական տնտեսությունների և վերամշակող կազմակերպությունների, ինչպես նաև տարաբնույթ ծառայություններ (ոռոգում, վարկավորում, տեխնիկական սպասարկում, խորհրդատվություն և այլն) մատուցող սուբյեկտների հետ պայմանագրային հարաբերությունների զարգացումը գյուղացիական տնտեսություններին ծանրաբեռնեց գործարարությանը հատուկ գործառույթներով: Այսպիսի պայմաններում որքան էլ ցանկանանք պնդել, որ գյուղատնտեսությունը բիզնես չէ, իրականությունից խուսափել չենք կարող: Մասնավորապես՝ եթե տնտեսությունը վարկային պարտավորություն ունի, ուրեմն՝ առևտրային բանկը նրան դիտարկում է որպես

[7] Բյուլլետեն Հայաստանի կենտրոնական վիճակագրական վարչության, N1-2, հունվար-փետրվար, Երևան, 1926 թ., էջ 5, Ա. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի ֆոնդ:

բիզնես և ոչ միայն արտոնություններ չի տրամադրում, այլև, նկատի ունենալով ոլորտի ռիսկային բնույթը, կիրառում է գրավադրման և տոկոսադրույքի ավելի խիստ պահանջներ: Նույնպիսի մոտեցում են ցուցաբերում նաև ապահովագրական, վարձակալության (լիզինգային) և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունները: Իսկ ագրովերամշակող ձեռնարկությունների համար գյուղատնտեսական արտադրողները, անկախ կարգավիճակից, սոսկ մատակարարներ են: Ուստի այս կազմակերպությունների և գյուղատնտեսական արտադրողների միջև հարաբերությունները գործընկերային են. երաշխավորված մթերումների համար ի սկզբանե վերջիններիս կարող են տրամադրվել կանխավճարներ կամ տարաժամկետ վճարման սկզբունքով՝ պարարտանյութեր, թունաքիմիկատներ և այլ շրջանառու միջոցներ: Այսպիսի փոխհարաբերությունների պայմաններում, անկասկած, գյուղացիական տնտեսությունների գործունեությունը կազմակերպվում է դասական գործարարության կանոններով: Իհարկե, եթե տնտեսությունն ինքնաբավ է և չունի պայմանագրային պարտավորություններ ու առևտրային բնույթ, այն կարելի է դիտարկել ոչ թե որպես բիզնես, այլ գյուղական կենցաղին հարիր կենսաձև:

Այդուհանդերձ, միանգամայն հասկանալի են մեր ընդդիմախոսների՝ «գյուղատնտեսությունը բիզնես չէ» արտահայտության շարժառիթն ու ենթատեքստը: Նրանք, նկատի ունենալով գյուղատնտեսության բարձր ռիսկայնությունն ու ցածր արդյունքային ցուցանիշները (եկամտաբերություն, աշխատանքի արտադրողականություն և այլն), գյուղական աղքատության համեմատաբար բարձր մակարդակը և վերարտադրության սահմանափակ կարողությունները, իրավացիորեն պնդում են, որ բանկային վարկի տոկոսադրույքը պետք է ցածր լինի, իսկ գյուղատնտեսական արտադրանքի գնման գները՝ երաշխավորված ու բարձր: Բայց, ինչպես նշեցինք, այս հիմնախնդիրների լուծման համար էական նշանակություն ունեն գյուղատնտեսության պետական կարգավորումն ու աջակցությունը: Ներկայում աշխարհի գրեթե բոլոր երկրներում գյուղատնտեսական վարկերի մատչելիությունը կարգավորվում է տոկոսադրույքների պետական լրահատկացումների, իսկ գների մակարդակն ու կայունությունը՝ նվազագույն կամ երաշխավորված գների սուբսիդավորման կառուցակարգով: Այդ մոտեցումը բավական բարձր արդյունք է ապահովել հատկապես Չինաստանում, Վիետնամում, Ֆիլիպիններում և այլ երկրներում[8]:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նույնպես իրականացնում է գյուղատնտեսության պետական աջակցության բազմաբնույթ ծրագրեր, սակայն անգամ դրանք դեռևս չեն փակում ոլորտի «ճեղքերը», հնարավորություն չեն տալիս հաղթահարելու շուրջ 300 հազար փոքր տնտեսությունների ոչ կատարյալ ենթակառուցվածքների, անբավարար տեխնիկայի, ոչ արդիական ու ոչ գիտելիքահենք տեխնոլոգիաների խնդիրները, ինչպես նաև այլ բացասական գործոնների պայմաններում ամբողջովին մշակելու գյուղատնտեսական հողերն ու արտադրելու անհրաժեշտ ծավալի պարենային ապրանքներ: Հետևաբար՝ պարենի որոշակի տեսակների՝ ներմուծման ճանապարհով պակասի լրացումն անհրաժեշտություն է, իսկ ներմուծման խելամիտ ու համաչափ կազմակերպումը՝ չափազանց հրատապ հարց:

2021 թ. տվյալներով, ամենաառաջնային օգտագործման պարենային ապրանքների ինքնաբավության առումով, Հայաստանի թույլ «տեղերն» են ցորենը (23.2%), հատիկաընդեղենը (37,3%), բուսական յուղը (0.6%), թռչնի միսը (26,7%), շաքարը (33,9%) և խոզի միսը (53,2%)[9]: Սննդի սպառման ծավալում նշված ապրանքների տեսակարար կշիռն ավելի բարձր է (աղ-

[8] Cassou, Emilie, Steven M. Jaffee, and Jiang Ru. 2017. The Challenge of Agricultural Pollution: Evidence from China, Vietnam, and the Philippines. Directions in Development. Washington, DC: World Bank. doi:10.1596/978-1-4648-1201-9, Chari, Mridula and Kumar Sambhav Shrivastava. 2017. How the government quietly scaled back its ambitious plans to reform fertiliser subsidies. Scroll. October 10. https://scroll.in/article/853258/howthe-government-quietly-scaled-back-its-ambitious-plans-to-reform-fertiliser-subsidies

[9] ՀՀ ՎԿ Պարենի առկայություն, https://armstat.am/file/article/f_sec_1_2023_3.pdf

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Սննդի սպառման համար ներմուծումից առավել մեծ կախվածություն ունեցող պարենային ապրանքները, %

Պարեն	2019 թ.	2020 թ.	2021 թ.
Ցորեն	83,0	110,7	91,1
Բուսական յուղ	101,0	101,9	96,8
Շաքար	33,0	67,6	77,7
Խոզի միս	46,1	56,8	48,5
Թռչնի միս	82,4	76,8	74,1

յուսակ 2):

Ըստ ՀՀ մաքսային վիճակագրության տվյալների՝ հիմնական պարենային ապրանքների ներմուծման 60-99%-ը բաժին է ընկնում Ռուսաստանի Դաշնությանը: Ուստի փորձենք ավելի հանգամանալից ուսումնասիրել հատկապես հացահատիկի արտադրության, արտահանման և գնագոյացման հարցերը, որոնք առկա են ՌԴ-ում:

Ռուսաստանի պատմության մեջ 2022 թվականին հացահատիկի բերքն ամենաառատն էր՝ հիմնականում պայմանավորված ցորենի ռեկորդային համախառն բերքով: ՌԴ գյուղատնտեսության նախարարության տվյալներով՝ այդ տարի կալսվել է ավելի քան 154,0 մլն տոննա հացահատիկ և 16 մլն տոննա նախնական գրանցված քաշով՝ մոտ 101,5 մլն տոննա ցորեն (25,4 մլն տոննայով ավելի), ավելի քան 23,2 մլն տոննա գարի (4,3 մլն տոննայով ավելի) և մոտ 16 մլն տոննա եգիպտացորեն (+0,8 մլն տոննայով ավելի) (աղյուսակ 3): Ըստ մասնագետների՝ դա բացառիկ տարի էր ՌԴ-ի համար, ուստի 2023 թ.-ի համար կանխատեսվող ցուցանիշներն ավելի համեստ են: ՌԴ գյուղատնտեսության նախարարի կարծիքով. «Եթե ինչ-ինչ պատճառներով ծայրահեղ ակտիվ արտահանում սկսվի, մենք կարող ենք մեզ թույլ տալ ավելացնել այս բաժնեմասը, որն առանց այդ էլ հսկայական է՝ հաշվի առնելով բերքի ծավալը»[10]: Իսկ բաժնեմասի ծավալը 2023 թվականի փետրվարի 15-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում կազմում է 25,5 մլն տոննա:

Եթե 2021/22 սեզոնում ցորենը բարձր մարժայի բերք էր, և գինը հասնում էր 20 հազար ռուբլու/տ-ի (8-10 հազար ռուբլի/տ՝ ինքնարժեքի դեպքում), ապա 2022/23 թվականներին իրավիճակն արմատապես փոխվել է. «Հացահատիկը դեռ նվազագույն եկամուտ է բերում արտադրողներին. քանի որ վաճառվում է 12-13 հազար ռուբլի/տոննա գնով, իսկ ինքնարժեքը 10-11 հազար ռուբլի/տոննա է: Փաստորեն, ամբողջ շահույթը տրամադրվում է հաջորդ բերքի ծախսերին»[11]: Հետևաբար, հաշվի առնե-

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Հացահատիկի համախառն բերքը ՌԴ-ում, 2019-2023 թթ., մլն տ[12]

	2019՝ փաստացի	2020՝ փաստացի	2021՝ փաստացի	2022՝ նախնական	2023՝ կանխատեսում
Ընդամենը հացահատիկ	121.2	133.5	121.4	154	128.6
Ցորեն	74.45	85.9	76.1	101.5	83.1
Գարի	20.5	20.9	18.0	23.2	18.45
Եգիպտացորեն	14.3	13.9	15.2	16.0	14.35
Հացահատիկային այլ կուլտուրաներ	12.0	12.7	12.1	13.3	12.7

[10] Зерновой рынок становится все депрессивнее. Итоги первой половины сезона 2022/23, https://www.agroinvestor.ru/analytics/article/39543-zernovoy-rynok-stanovitsya-vse-depressivnee-itogi-pervoy-poloviny-sezona-2022-23/

[11] Նույն տեղում:

[12] Նույն տեղում:

լով պարարտանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների, պահեստամասերի թանկացումը և այլ ծախսեր, 2023 թվականին գների բարձրացումն անխուսափելի է:

Մասնագետների կարծիքով՝ այսօրվա շուկայական իրավիճակը ֆերմերներին չի խրախուսում ներդրումներ կատարել 2023 թվականին՝ ցանքատարածությունների ընդլայնման համար: Արդյունքում, ցանվել է 17,7 մլն հա աշնանացան ցորեն՝ նախատեսված 19 մլն հեկտարի փոխարեն:

Արտահանման գործընթացը ՌԴ-ում բարդանում է՝ պայմանավորված ռուս-ուկրաինական պատերազմի պատճառով երկրի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներով, նավերի վարձակալման և բեռների ապահովագրման խնդիրներով, վճարումների կատարման դժվարություններով և այն հանգամանքով, որ ռուսական նավերի մուտքն արգելված է բոլոր նավահանգիստներում:

Այդուհանդերձ, պահպանվել են ռուսական հացահատիկի արտահանման հիմնական ուղղությունները՝ Թուրքիա, Եգիպտոս, Ադրբեջան, Հայաստան, Հյուսիսային Աֆրիկայի, Մերձավոր Արևելքի, Պարսից ծոցի երկրներ և այլուր:

Ռուսական ցորենի արտահանման FOB գները 2022 թվականի նոյեմբերի սկզբից ի վեր առաջին անգամ դադարել են նվազել և նույնիսկ փոքր-ինչ աճել են՝ հասնելով մինչև 275 ԱՄՆ դոլար/տոննա[13]:

Ըստ ՌԴ գյուղատնտեսության նախարարության հաղորդումների՝ 2023 թվականին հացահատիկի բերքը կկազմի 123 մլն տոննա, այդ թվում՝ 78 մլն տոննա ցորեն, թեև այս գնահատականը կարող ճշգրտվել դեպի վեր: Անկախ փորձագետներն ավելի լավատես են իրենց կանխատեսումներում: Այսպես, ըստ «Ռուսագրոտրանս» վերլուծական կենտրոնի ղեկավար Իգոր Պավենսկու, 2023 թվականին Ռուսաստանը կհավաքի 129,8 միլիոն տոննա հացահատիկ, որից 84,1 միլիոն տոննան՝ ցորեն, որից հնարավոր կլինի արտահանել 41 մլն տոննա: Կանխատեսվում է, որ ՌԴ ամենամոտ մրցակիցը՝ ԵՄ-ն, կլինի երկրորդ տեղում՝ 32,7 մլն տոննա, իսկ երրորդը կլինի Կանադան՝ 23,8 մլն տոննա արտահանմամբ[14]:

Այդուհանդերձ, ստեղծված հանգամանքներից ելնելով, գյուղատնտեսության նախարարությունը նոր միջոցներ է ձեռնարկում ֆերմերներին աջակցելու համար: Այսպիսով, հունիսի 1-ից սկսած, գերատեսչությունը նախատեսում է ճշգրտել հացահատիկի արտահանման մաքսատուրքը, որպեսզի ֆերմերներն ավելի շատ միջոցներ ունենան: Այժմ սահմանային գինը, որից հաշվարկվում է մաքսատուրք, կազմում է 15 հազար ռուբլի՝ մեկ տոննայի համար: Դա կբարձրացվի մինչև 17 հազար ռուբլի: Բացի այդ, ֆերմերները սուբսիդավորվելու են 2 հազար ռուբլի՝ մեկ տոննա հացահատիկի համար: Հաշվի առնելով տրանսպորտային ծախսերի աճը՝ երկաթուղային փոխադրումների սուբսիդիաները 2023 թվականին ավելացել են 1,3 մլրդ ռուբլով և կազմել 6,3 մլրդ ռուբլի: Նաև գյուղտեխնիկայի ձեռքբերման համար ֆերմերներին կտրամադրվի 20% զեղչ ընթացիկ գնից, ինչը թույլ կտա մոտ 6000 տրակտոր գնել ցածր գներով[15]:

Քանի որ 2022 թ., նավերի հետ կապված, դժվարություններ կային հացահատիկի տեղափոխման համար, իշխանությունները մտածել են նավահանգստային ենթակառուցվածքների զարգացման և սեփական նավատորմի կառուցման մասին: Ըստ ՌԴ գյուղատնտեսության նախարարության՝ հացահատիկի տեղափոխման համար առաջին նավը նախատեսվում է կառուցել 2025 թվականի վերջին կամ 2026 թվականի սկզբին:

Ռուսաստանը նախատեսում է շարունակել հացահատիկի մատակարարումն ավանդական գնորդներին և առավել կարիքավոր երկրներին: Միաժամանակ, ՌԴ գյուղատնտեսության նախարարությունը դիտարկում է ռուսական հացահատիկի գնորդների հետ հաշվարկների կատարում՝ ազգային արժույթներով:

[13] Экспортные цены на российскую пшеницу растут впервые за четыре месяца — «Русагротранс», https://xn--e1alid.xn--p1ai/journal/publication/2024

[14] Россия сохранит лидерство на мировом рынке пшеницы, https://rg.ru/2023/05/21/glavnyj-vshod.html

[15] Аграриям предоставят скидку в 20% на покупку сельхозтехники; https://rg.ru/2023/05/19/agrariiam-predostaviat-skidku-v-20-na-pokupku-selhoztehniki.html

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ.

1. Հայաստանի սննդի սպառման հացահատիկի պակասորդը գերազանցում է 90 տոկոսը, որի 99 տոկոսը ներմուծվում է Ռուսաստանի Դաշնությունից:
2. Ռուսաստանը ԵԱՏՄ երկրներ, այդ թվում՝ Հայաստան հացահատիկ է արտահանում առաջնային կարգով, արտոնյալ պայմաններով և առաջիկայում նախատեսում է անցնել վճարման ազգային արժույթի:
3. Հայաստանի խոշոր ալրաղացները և հացաթխման ձեռնարկությունները ՌԴ գործընկերների հետ ունեն վստահելի ու կայուն փոխհարաբերություններ, որոնք հնարավորություն են ընձեռում բավարարելու ոչ միայն ընթացիկ պահանջարկը, այլև ստեղծելու ռազմավարական պաշարներ:
4. Հայաստանի ներսում հայ-ռուսական առևտրային հարաբերությունների անհարկի վատաբանումը և սեփական հացահատիկով ինքնաբավության հասնելու անհիմն եզրահանգումները վնասում են ՀՀ պարենային անվտանգությունը:
5. ՀՀ կառավարությունը պետք է շարունակի արտոնյալ տոկոսադրույքով վարկերի տրամադրմամբ և լոգիստիկ ենթակառուցվածքների զարգացմամբ նպաստել հացահատիկի ներկրման գործընթացին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թաթուլ Հակոբյան, Դեմիրելը և Հայաստանը, https://www.civilnet.am/news/159869/%D5%A4%D5%A5%D5%B4%D5%AB%D6%80%D5%A5%D5%AC%D5%A8-%D6%87-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A8/
2. Բյուլլետեն Հայաստանի կենտրոնական վիճակագրական վարչության, N1-2, հունվար-փետրվար, Երևան, 1926 թ., էջ 5, Ա. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի ֆոնդ:
3. ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2023 թ. հունվար-մարտ, հրատարակվել է 26-ը մայիսի, 2023 թ.:
4. ՀՀ մաքսային ծառայություն, Ներմուծման վիճակագրություն, 2022-2023 թթ., https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIImportStatistics
5. Топ-10 ведущих стран-производителей пшеницы в 21 веке, https://agbz.ru/news/top-10-vedushchikh-stran-proizvoditeley-pshenitsy-v-21-veke/
6. Россия стала крупнейшим в мире экспортером пшеницы, https://www.vesti.ru/finance/article/3385343
7. Власов В. А., Матвеева П. М., Зуева В. А. Отдельные системные проблемы развития сельского хозяйства в контексте обеспечения продовольственной безопасности России // Аграрное и земельное право. 2021, № 2, с. 38-42.
8. Воронина Н. П. Сельскохозяйственная кооперация как механизм обеспечения продовольственной безопасности в системе национальных приоритетов России, монография. М.:, Проспект, 2021, 192 с.
9. Курбатова С. М., Мазуров В. Ю., Андреева Ю. В. О доктринах продовольственной безопасности РФ // Аграрное и земельное право. 2020. № 8. С. 45-46.
10. Старкова А.. Продовольственная безопасность как главный показатель социально-экономического развития государства, Сборник научных статей 10-й Международной научно-практической конференции. Курск, 2022, Издательство: Юго-Западный государственный университет (Курск).
11. Экспортные цены на российскую пшеницу растут впервые за четыре месяца, «Русагротранс», https://xn--e1alid.xn--p1ai/journal/publication/2024
12. Россия сохранит лидерство на мировом рынке пшеницы;- https://rg.ru/2023/05/21/glavnyj-vshod.html
13. Պարենային ճգնաժամն ինչ ազդեցություն կթողնի Հայաստանի վրա. պարզաբանում է տնտեսագետը, https://eco.am/%D5%BA%D5%A1%D6%80%D5%A5%D5%B6%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%B3%D5%A3%D5%B6%D5%A1%D5%AA%D5%A1%D5%B4%D5%B6-%D5%AB%D5%B6%D5%B9-%D5%A1%D5%A6%D5%A4%D5%A5%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/
14. Պարենային անվտանգություն. որքանով է

Հայաստանն ինքնաբավ ձեթի, շաքարի ու մսի գծով,
https://mediafactory.am/our-products/food-security
15. Պարենի առկայություն,
https://armstat.am/file/article/f_sec_1_2023_3.pdf
16. Зерновой рынок становится все депрессивнее. Итоги первой половины сезона 2022/23
https://www.agroinvestor.ru/analytics/article/39543-zernovoy-rynok-stanovitsya-vse-depressivnee-itogi-pervoy-poloviny-sezona-2022-23/
17. Международный опыт субсидирования сельского хозяйства и продовольственная безопасность России;
https://naukovedenie.ru/PDF/63EVN114.pdf

Самвел АВЕТИСЯН
Старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ,
доктор экономических наук, профессор

БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

НАСКОЛЬКО ГАРАНТИРОВАН ИМПОРТ ПШЕНИЦЫ В НЕОБХОДИМОМ КОЛИЧЕСТВЕ В АРМЕНИЮ?

Основной проблемой продовольственной безопасности Армении является обеспечение населения хлебом и хлебобулочными изделиями в достаточном количестве и качестве. Эта проблема всегда была актуальной, так как по разным причинам Армения не имела высокой самообеспеченности зерном.

В настоящее время Российская Федерация является единственным экспортером зерна в Армению. Безусловно, такое монопольное положение имеет риски, но геополитическое положение Армении и тенденции развития межгосударственных экономических и политических связей показывают, что основной источник покрытия дефицита спроса на пшеницу сегодня и в ближайшем будущем является импорт из России. Поэтому необходимо с уважением и мудростью относиться к торгово-экономическим отношениям с Российской Федерацией и ЕАЭС и не забывать уроки прошлого.

В данной статье освещается состояние производства и экспорта пшеницы в РФ, а также тенденции развития торговых отношений с Арменией.

Ключевые слова: *продовольствие, зерно, самообеспечение, производство, потребление, торговля, тенденции*

Samvel AVETISYAN
Senior Expert at «Amberd» Research Center, ASUE,
Doctor of Economic Sciences, Professor

SECURITY AND CHALLENGES

HOW GUARANTEED IS WHEAT IMPORT IN THE REQUIRED QUANTITY TO ARMENIA?

The main problem of food security in Armenia is to provide the population with bread and bakery products in sufficient quantity and quality. This problem has always remained pertinent due to Armenia's limited self-sufficiency in grain production.

At present, the Russian Federation is the only exporter of grain to Armenia. Of course, such a monopoly position presents inherent risks, but the geopolitical position of Armenia and the development trends of interstate economic and political ties show that the main source of filling the deficit in demand for wheat today and in the near future is imports from the Russian Federation. Therefore, it is necessary to treat trade and economic relations with the Russian Federation and the EAEU with respect and wisdom, while drawing lessons from historical experiences.

This paper highlights the state of production and export of wheat in the Russian Federation, as well as trends in the development of trade relations with Armenia.

Keywords: *food, grain, self-sufficiency, production, consumption, trade, trends*